

ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ ԼԵՌՆԱՅԻՆ ՇՐՋԱՆՆԵՐՈՒՄ
ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆԸ

NORWEGIAN MINISTRY OF FOREIGN AFFAIRS

REC CAUCASUS

Կովկասի տարածաշրջանային բնապահպանական կենտրոն
Հայաստանի Հանրապետություն
0025 Երևան, Չարենցի փող.1;
Հեռ: +374 10 57 47 43
Ֆաքս: +374 10 57 51 48
www.rec-caucasus.am



“Աջակցություն Հարավային Կովկասի լեռնային շրջաններում կենսաբազմազանության պահպանման քաղաքականության և պրակտիկայի զարգացմանը” տարածաշրջանային ծրագիրն իրականացվում է Կովկասի տարածաշրջանային բնապահպանական կենտրոնի (ԿՏԲԿ) կողմից` Նորվեգիայի կառավարության ֆինանսական աջակցությամբ: Ծրագրի տևողությունն է 2011թ-ից մինչև 2014 թվականը:

Ծրագրի գլխավոր նպատակն է` հզորացնել տեղական համայնքների և տեղական իշխանությունների կարողությունները Հարավային Կովկասի լեռնային շրջանների անտառային էկոհամակարգերի և կենսաբազմազանության կորստի նկատմամբ բարելավելու` կենսաբազմազանության մասնակցային կառավարումը:

## Ծրագրի հատուկ նպատակներն են`

- Բարձրացնել տեղական համայնքների, լեռնային շրջանների տեղական իշխանությունների և ազգային մակարդակում որոշում կայացնողների իրազեկվածությունը և գիտելիքները անտառային էկոհակամարգերի և կենսաբազմազանության արժեքների, դրանց կայուն օգտագործման և պահպանման օգտակարության մասին, ինչպես նաև մեծացնել կենսաբազմազան պահպանության պատրաստակամությունը:
- Տեղական մակարդակում կենսաբազմազանության կառավարման պլանավորման գործընթացներում ներդնել մասնակցային կառավարման մեթոդը:
- Դեգրադացված անտառային էկոհամակարգերի վերականգնման և դրանց նշանակության բարձրացման պիլոտային ծրագրերի իրականացման միջոցով ցույց տալ դրանց գործնական կիրառումը:

Հաշվի առնելով, որ անտառային և բարձր լեռնային էկոհամակարգերը բացահայտվել են, որպես առավել խոցելի և առաջնային, ուստի էկո-տարածաշրջանային մակարդակում կենսաբազմազանության պահպանման ջանքերի իրականացման համար, ծրագրի գործողությունները նպատակաուղղված կլինեն Հարավային Կովկասի երկրների լեռնային տարածաշրջանների անտառային էկոհամակարգերին` մասնավորապես` Ռաչա տարածաշրջանը Վրաստանում, Յենիյոլ և Շեհրիյար տարածաշրջանները Ադրբեջանում, Կողբ և Ջուջևան տարածաշրջանները Հայաստանում:

## Ծրագրի նպատակներին հասնելու համար անհրաժեշտ է իրականացնել հետևյալ գործողությունները:

- Ընտրված տարածքների հարակից գոտիներում էկոհամակարգային ծառայությունների և կենսաբազմազանության տնտեսական արժեքների գնահատում:
- Թիրախ համայնքների հարակից գոտիներում անտառային ռեսուրսների օգտագործման ուսումնասիրություն և անտառային էկոհամակարգերի GIS տվյալների բազայի ստեղծում:
- Իրականացնել առկա տարածաշրջանային/տեղական քաղաքականությունների, ռազմավարությունների, ծրագրերի վերլուծություն` հաշվի առնելով արտացոլումը կենսաբազմազանության պահպանմանը, դրա կայուն օգտագործմանն, անտառօգտագործմանը և համայնքային անտառկառավարմանն առնչվող հիմնախնդիրները, և առաջարկությունների մշակում ուղղորդելու` կենսաբազմազանության և համայնքային անտառկառավարման խնդիրները քաղաքականության/կանոնակարգող համապատասխան փաստաթղթերում:
- Իրականացնել կարողությունների կարիքների գնահատում տեղական մակարդակում, ներառելու` կենսաբազմազանության պահպանման, կայուն օգտագործման և համայնքային անտառների կառավարման հիմնախնդիրները տեղական զարգացման քաղաքականություններում, ինչպես նաև մշակել առաջարկություններ, նպաստելու` համապատասխան կարողությունների հզորացմանը:
- Կազմակերպել ուսուցումներ որոշումներ կայացնողների և տեղական բնակչության համար` էկոհամակարգային ծառայությունների արժեքների, կենսաբազմազանության պահպանման և կայուն օգտագործման պլանավորման վերաբերյալ (ներառյալ համայնքային անտառների կառավարման պլանավորման և իրականացման հիմնախնդիրները), ինչպես նաև աշխատանքային ուսուցումներ ուղղված համայնքների գործնական կարիքներին:
- Մշակել կենսաբազմազանության պահպանման և կայուն օգտագործման տեղական ծրագրեր, համայնքային անտառկառավարման պլաններ ուղղված համայնքային մասնակցային մոտեցմանը:
- Մշակել և իրականացնել ցուցադրական ծրագրեր ուղղված դեգրադացված անտառային էկոհամակարգերի վերականգնմանը, դրանց արժեքների համապատասխան բարձրացման նպատակով:

## Ծրագրի իրականացումից ակնկալվող արդյունքներն են

- Էկոհամակարգերի ծառայությունների և կենսաբազմազանության տնտեսական արժեքների նշանակության վերաբերյալ գիտելիքները փոխանցված են:
- Բարձրացված է տեղական համայնքների միջև հանրային իրազեկվածությունը կենսաբազմազանության պահպանման կարևորության վերաբերյալ, որը քաջալերում է տեղի բնակչությանը կայուն եղանակով օգտագործել կենսառեսուրսները:
- Հզորացված են տեղական կարողությունները, գիտակցելու` կենսաբազմազանության և էկոհամակարգային ծառայությունների արժեքների կարևորությունը:
- Կենսաբանական ռեսուրսները կառավարվում են կայուն եղանակով, որը հեշտացնում է կենսաբազմազանության պահպանումը թիրախ համայնքներում:
- Հզորացված են կենսաբազմազանության մասնակցային կառավարման պլանավորման գործընթացում տեղական կառավարման մարմինների և համայնքների հմտությունները, որի արդյունքում շահառուները կարող են ինքնուրույն կառավարել գործընթացը:

## Կովկասի տարածաշրջանային բնապահպանական կենտրոն (ԿՏԲԿ)

Կովկասի տարածաշրջանային բնապահպանական կենտրոնը (ԿՏԲԿ) անկախ, ոչ քաղաքական, ոչ առևտրային կազմակերպություն է ստեղծված օժանդակելու` բնապահպանական խնդիրների լուծմանը, ինչպես նաև Հարավային Կովկասի երկրներում քաղաքացիական հասարակության զարգացմանը:

ԿՏԲԿ առաքելությունն է օժանդակել Կովկասի երկրներում բնապահպանական խնդիրների լուծմանը, ՀԿ-ների, կառավարական կառույցների, մասնավոր սեկտորի, տեղական համայնքների և այլ շահառուների միջև համագործակցության խթանման միջոցով ազգային և տարածաշրջանային մակարդակում, նպաստելու` տեղեկատվության ազատ շրջանառության զարգացմանը համապատասխան Օրհուսի կոնվենցիայի սկզբունքներին; առաջարկելու օժանդակություն բնապահպանական բոլոր ՀԿ-ներին և այլ շահագրգիռ կողմերին, և բարձրացնելու` հանրային մասնակցությունը որոշումների կայացման գործընթացում, ուստի աջակցելով Հարավային Կովկասի պետություններին ժողովրդավարական քաղաքացիական հետագա զարգացման գործին: